ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

N 01 – 219
05.03.2026

«ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆԻՔՍ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
պարոն Ս. ԴԱՎՈՅԱՆԻՆ
(ՀՎՀՀ՝ 08432296, էլ. հասցե՝sash.davoyan01@gmail.com)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Դավոյան,

ԲՄԿ ՊՈՒՀ «Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի (այսուհետ՝ Գնորդ) և «ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆԻՔՍ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Վաճառող կամ Ընկերություն) միջև 2025 թվականի հոկտեմբերի 24-ին կնքվել է N «ՌՀ-ՍՀ-ԳՀԱՊՁԲ-25/23-1» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), համաձայն որի Վաճառողը պարտավորվել է մատակարարել 15 հատ ինտերակտիվ սենսորային էկրան 86 դյույմ՝ առանց տեսախցիկի (չափաբաժին N1), 1 հատ դյուրակիր համակարգիչ (չափաբաժին N4) և 2 հատ համակարգչային մոնիտոր (չափաբաժին N6) (այսուհետ՝ նաև Ապրանքներ)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի և մատակարարման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի գինը կազմում է 15 204 750 (տասնհինգ միլիոն երկու հարյուր չորս հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Պայմանագրի N1 հավելվածով սահմանված NN4 և 6 չափաբաժինների մատակարարման ժամկետը սահմանվել է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրվա ընթացքում՝ մինչև 2025 թվականի նոյեմբերի 22-ը, իսկ N1 չափաբաժնի՝ մինչև 2026 թվականի փետրվարի 20-ը: 2026 թվականի մարտի 3-ի դրությամբ Ապրանքները չեն մատակարարվել:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում Գնորդն իրավունք ունի հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, Ծառայությունների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, Ծառայությունների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Գնորդն միակողմանի լուծում է Պայմանագիրը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով

նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորած մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Տեղեկացնում ենք, որ Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ պայմանագրի և որակավորման ապահովումները Գնորդի անվամբ «Արդշինբանկ» ՓԲ ընկերությունում բացված թիվ 2480100103250010 հաշվեհամարին փոխանցելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալն՝ առաջարկում ենք Գնորդի անվամբ «Արդշինբանկ» ՓԲ ընկերությունում բացված թիվ 2480100103250010 հաշվեհամարին փոխանցել՝

1. Պայմանագրի ապահովման գումարը՝ 1 713 200 (մեկ միլիոն յոթ հարյուր տասներեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամ,

2. Պայմանագրի որակավորման ապահման գումարը՝ 2 569 800 (երկու միլիոն հինգ հարյուր վաթսունինը հազար) ՀՀ դրամ:

Տեղեկացնում ենք, որ եթե վճարման ենթակա գումարները սույն ծանուցումը ստանալու պահից հաշված 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում փոխանցվի նշված հաշվեհամարին, ապա Կատարողի նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 2-րդ մասով նախատեսված դրույթները:

Հարգանքով,

Ռեկտոր **Է. ՍԱՆԴՈՅԱՆ**

ՌԵԿՏՈՐ | ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
0051, Հայաստան, Երևան, 123, Հովսեփ Էմինի փ. | կ.հ.: 8130 | rector@rau.am